

Ոչ նուազ հետաքննական է կանանց յեկեղեցոյ դուռ ելլելու տեսարանը յաւարա աստուածային պաշտամանց ։ Ոմանց իրենց հին տարազով որ ինչպէս ըսինք՝ ծանր է և ոչ այնշափ հաճոյատեսիլ ։ իսկ օրիորդք և նորահականացնայք՝ եւդուպական ձևով և ճոխովթեամբ, բաց ի զիխանոցէն որ թաւշեայ պասկ մ'է ակունքով կամ բանուածքով գորդարուած, ու կը հանգի ճակտին վրայ, նոյնպէս ասղնէգործ թեթև շարշէ քողով մը ծածկուած։ Շատերն այս պասկին վրայ բաց գունով թաշկինակ մը անցընելով կղակին տակ կը հանգուցն, որով առանց մեծ պյանաց զուինին կը պահապանէն։

Հայուհիք ընդհանրապէս գեղադէմ են և հաճոյատեսիլք, և առանց ունելց վրացի կանանց անհոգ կերպը, եռանդուն են բնութեամբ ։ . . .

Առաւել քան ի թիֆլիս զգալի է ի քաղաքիս աղամինեաց նուազովթինը, և գարմանայի կը թուի գաղղիունոյ մը՝ որ վարժած է սնուցչաց և մանկանց սպասկաց, տեսնել նորահակ մայրեր՝ առջևնին ձգած ի փողոցի խեղճ ծառայք որ իրենց բազկաց վրայ կ'որրեն լալիան տղեկներ։

Շարայարելի

## ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ԳԻՐԱ ՄԱՆՈՒԺԵԱՆ ՑԻՍՈՒԽՄԻՒՆԻՒՄԻՆ ՆԻԿ. ՄԱԼԻ ՀԱՅԱՀԻՑԻՆ

ՀԻՍՈՒԽՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԻՆ ԱՅՍ ԳՐՈՒԱԾՔԻՆ ՎՐԱՅ

**Ո**Չ անձանօթ է բանասիրաց որ հին և միջին մատենազրութիւն մեր՝ ի թիւս այլոց սնհարազատ կամ անվաներ գրոց աստուածառնչ գրոց կամ անկէ դուրս, աւանդած և հասուցած է առ մեզ նաև թիստափ մանկութիւն կոչուած գրութիւն մը։ Բազմահմտուառ տառչացապետն Պետրոպուրգի կայսերական համալսարանին հայագէտն Մառ, իր Ամառնային ուղեւորութիւն ի Հայատան, ծանօրութիւնը և քաղուածքի հայկական ձեռագրաց գրուածքին մէջ, զոր սուս արևելապէտ ընկերութեան բանտսիրականի մը մէջ հետզինտ կը հրատարակէ, այդ հետսպինների անհարազատ երգասիրութեան վրայ հետևեալ տեղեկութիւններն տուած է, զոր համառօտելով կը թարգմանենք, բնադրին ինզուին անծանօթ մեր ազգային բանասիրաց ընծայելով։

Սարգիս Շնորհալի, մատենագիր երկուասաներորդ գարու, ի թիւս անընդունելի կամ անհարազատ գրոց կը յիշատակէ և զՄանկութիւն քրիստոնուի<sup>(1)</sup>։ իսկ Անեցին Մխիթար որ հետեւալ երեքտանաներորդ գարու մէջ մատենագրած է, կը պատմէ<sup>(2)</sup> թէ Բ(ա) խիրա ընթերցաւ Մուհամմէտի այն գերքը՝ զոր

1. Մատենագրատան հայկական բարգմանուրեանց, յ'Էջ 195, ժանօթ։
2. Մխիթարաց Անեցոյն պատմութիւն։ ի լոյս ած Ք. Պ. Ա. Գետրուորդ. յ'Էջ 36։

կը կոչեն Մանկութեան Քրիստոսի: Կարելի է որ այդ գիրք՝ հայերէն լեզուով ծանօթ լինի Միաթմարայ: Սակաւ մի յետոյ, վարդան նմանապէս մատենադիր երեքտասաներորդ գարու, անտարակոյս օգտուեցաւ սորա մէջ Քրիստոսի մանկութեան նկատմամբ գտնուած կեղակարծ պատմութենէն, վասն զի մէջ բերէ յանհարազատ յայսմ գրութեան յիշատակուած մոդ—ալքայից անուանքը, և կու տայ մեզ՝ մանուկն Յիսուսի յեգիպտոս ճանապարհորդութեան վրայ՝ անհաւաստի մանրապատում տեղեկութիւններ<sup>(1)</sup>: Ըստ բանից Վարդանայ՝ Հեղինակի համառօտ Աշխարհագրութեան մը, Մոկաց գաւառին Փրկիչ եկեղեցոյ Մըապարսպին մէջ կը գտնուէր գերեզման Գասպարայ (ըստ անյայտին) միոյ ի մոգ թագաւորաց, ի վերջ կոյս երեքտասաներորդ գարու՝ Միսիթմար Այրիվանեցի ի թիւս անհարազատ գըրոց կը գասէ և զՄանկութիւն Յիսուսի: Հայկական հին մատենագրութեան մէջ գտնուած այս անհարազատ գըրին գոյութեան կը վկայէ բաց յայլոց և իմ գտած վրացերէն գրոց ցուցակ մը, շարագրեալ ի վերջ անցելոյ գարուն կամ ի սկիզբն ներկայ գարուս. յորում ի թիւս այլ՝ հայերէնէ ի վրաց լեզու յեղեալ երկասիրութեանց, յիշուած է (թիւ 177) և Մանկութիւն տեսան:

Հայկական հին բարգևանութեանց մատենադարան գրոց երկասիրողն (Վենետիկ 1889 յ'էջ 196), Քրիստոսի մանկութեան մատենին երեք ձեռագիր կը յիշէ, յորոց Հնագոյնն (1347 թուականին) կը պահուի, կ'ըսէ, կտորց անապատին մէջ. իսկ միւս երկուքն անդէն ի մատենադարանի մենաստանին Միսիթմարեանց վենետիկոյ. և ըստ վերջին կրկին ձեռագրաց՝ մէջ կը բերէ գըրքիս խորագիրքը. որոց համեմատ վենետիկեան ձեռագիրք կը բովանդակեն այս անվաներ համարուած գըրիս հայկական թարգմանութիւնն, զոր ըստ այլ աղքեր՝ Թուսիկ վարդապետի քով գտնուած ձեռագրի համեմատ՝ պիտի քննենք ստորև, քաղելով<sup>(2)</sup> թարգմաներով և բացայստելով:

1. Évariste Drud'homme, Extrait du livre intitulé *Solutions des passages de l'Écriture sainte: Journal Asiatique*, 1867, XI-106:

2. Յուսիկ վարդապետի քով դտնուած ձեռագրին հանգամանք, գոր նա արդէն որոշած է ընծայել Լմիտածին վանաց մատենադարանին, հետևեալքն են. — 224 թուղթ, ութածալ, Գրութիւն՝ երկսիւն, իւրաքանչիւրն՝ 14. 6-կ. 2 Հարիւրորդամերը: Ցողք՝ տասնեռութ: Կազմ՝ կաշեաց Թուղթ՝ ստուար գեղնագյոյն: Խաչնակութիւն իշից՝ հայտառա: Գրութիւն՝ նօսոք: Զարդ՝ սկզբնատառք միջակ մանրանկարուք: Ընդօրինակող՝ Բարսամ՝ քահանայ: Թուական գրութեան՝ 1115 ըստ հայ թուականութեան՝ 1666: Հանգամանք՝ ի սկիզբն երկու թուղթ, տեղ տեղ

Մեր այս յիշատակարան՝ շատ կը տարբերի եւրոպական լեզուներով գտնուած ծանօթ համանուն երկասիրութիւններէն, ինչպէս դիտած է զայս և Մատենադարանի հեղինակն. բայց համաձայն է արևելեայց՝ Պատմութիւն մանկութեան Քրիստոնի գրոց թարգմանութեանց հետ. օրինակ իմն, արաբականին հետ, զոր լատին թարգմանութեամբ հրատարակած է Հենրիխ Սիկէ<sup>(1)</sup>: Եթէ շեմ սխալիր, միայն արևելեան օրինակաց մէջ կը հանդիպինք, օրինակ իմն, անցից կամ դիպաց ինչ Յիսուսի ընդ ներկարարին, որ հայ անհարազատին մէջ ալ կը գտնուի: Առանձին կերպով նպաստամատոց կարող է լինել ի հետազոտութիւն հայկականին նաև պարսկայինն, որոց գոյութիւնն գիտենք՝ բաց յայլոց՝ նաև Մենքելոս Ցըրաբրոսի պարսկերէն բառարանին, ակնարկ մը տարով Tinctoria Արք բառին ստորև նշանակուածին<sup>(2)</sup>: Արդէն իսկ հայկական թարգմանութեանս նախկին աղբիւրը՝ ի պարսկայինն՝ մատնանիշ կը ցուցընէ թէ անոր պէտք է ընծայել երիցութան դերը, դլխաւորապէս այն մասանց մէջ՝ որ ըստ մեր անցայտիս՝ կը զբաղին պարսիկ մոգ-արքայիւ և ընդհանուր պարսիկ ժողովրդեամբ. և այս մեր կարծեաց ի նպաստ կը խօսին մեզ հետ նոյն լեզուէ ի փոխ առնուած բառերն, ինչպէս դուզան = խանութ, և յայտնագոյն եւս՝ չոգան = փայտ ծայրակոր գնտակ խաղու, անյայտին հայկական թարգմանութեան մէջ:

Ընդհանրապէս մեր այս յիշատակարան գրուած է այն յետնագոյն մատենագրութեան լեզուով որ հայ գրոց մէջ զտնուած վիպաց և առակաց յատուկ է, և որ՝ ցարդ պարզել ու բացատրել կրցածիս համեմատ՝ սերտ յարաբերութեան մէջ կը գըտնուի՝ արևելեան ժողովրդոց՝ մատենագրութեանց համանման երկասիրութեանց հետ, դլխաւորարաբ Պարսից և Արաբաց:

Յուսիկ վարդապետի ձեռագրին մէջ վեց գլուխ թողուած է, որք առանձին կերպով կուսին Մարիամնց, նորա ծնողաց և

ալ թղթոց այս ինչ կամ այն մասն պատըռուած՝ կը պակսին. մերթ ալ թանաքն գունաթափ է: Բովանդակութիւն ամբողջ գրչագրին. Ա. Զաւարածոյ առակաց ընծայելոց Վարդանայ: բաց ի սակաւ ինչ մասնէ, ինչպէս կը տեսնուի Ծէն-Մարդէնի Բարիզու մատենադարանին ձեռագրէն ըրած հաւաքածոյիս ըստ մասնեայ հրատարակութենէն: Բ. Մանկութիւն Քրիստոսի: Գ. Վիպական պատմութիւն Պղնձեայ քաղաքին: Ընթերցողը առաջին և երկրորդ մասանց նկատմամբ տեղեւ կութիւններ կրնայ գտնել իմ պատրաստած «Հետազոտութիւն վիպաց որ ի գիրը Հայոց» հատուածիս մէջ, առև նաև «Դիտողութիւնք հասրագէտ աղուիսու և գայլու վրաց» հրատարակութեան չրբորդ հատօրին մէջ:

1. Trajecti ad Renum, MDCXCIVII.

2. Հմատ. Հ. Սիկէ, անդ, յէջ 55

ծննդեմն, ի տաճարն ընծայման և այլն, կը վերաբերին, և կը գտնուին ի ձեռագիրս մատենագարանին Մխիթարեանց Վենետիկոյ. դարձեալ, ինչպէս իմ քաղուածներէս ալ կը տեսնուի, ձեռագիրին գլխակարգութիւնք անհոգութեամբ դրուած են. այնպէս որ մերթ հետևելին և մերթ նախորդ գլխոյն կը վերաբերին:

(Մ'եր ձեռքը գտնուած դրչագրին մէջ) անյայտը այս սկզբանաւորութիւնն ունի:

Ա. Ես վաղին յարուցեալ առ զՄարիամ ուրախութեամբ սրտի առաջի իւր և ասէ. Միզայ տեսուն Յստուծոյ. քանզի բաղում անգամ զրպութեցի զկուսութիւն քո սուրբ և ոչ յառաջ իմացա և ծանեա իթէ ծնմարիտ է բանդ զոր ասես. Եւ մինչեռ Յովիչի զայ ամենայն զմուա ածէր. խաւէր և զրազ...

Այս կէս բառին վրայ ընագիրն կը սպառի. վամն զի հետեւեալ հիմնգ տողն ու աւելին ձեռագրի պատուած կտորով մը կը պակսի: Բայց պահուած մասէն կ'իմանանք թէ Յովսեփիայ քով Աննա դպիրն կու գայ, որ յետ նախկին ընդունելութեան, մեծարանաց և փոփոխակի հարցմանց՝ ճաշի կը հրաւիրուի. սեղանի վրայ նա կ'անդրադառնայ թէ կյուը ծանրացեալ յլի է: Աննա զայն կը ծանուցանէ Զաքարիա քահանայապետին. և Յովսէփի կուսին հետ ի միասին դատաստանի կը կանչուի. ուր կը յայտնուի նոցա անմեղութիւնը, և թէ ոչ Յովսէփ և ոչ Մարիամ խոսորած չեն ի պատուիրանաց Աստուծոյ: Մակայն ի ստուգութիւն ճմարտութեան կը դիմեն ջրոյ փորձութեան.

Ասէ քահանայապետն. Արրուցից զլուրն յանդիմանութեան, և աէր յայտնեացէ զգործն ձեր թէ ծնմարիտ էք: Յայնժամ առեալ քահանայապետան Զաքարիա զլուրն ի փորձութեան ի ձեռնի իրում, և կոչեաց զՅովսէփ առաջի իւր և ասէ ցնա. Այր դու, հայինց ի ծերութիւն յայտաց քոյ. և տես յայտապէտ աշճ քո զեբդ կենաց և մահու. և մի տար կամաս զանձն քո ի փորձութիւն և կ կորուսու Ասէ Յովսէփի. կենցանի է աէր և սուրբ է անուն նորա, որ բնաւ շար զանձնէ իւմէ ոչ գիտեմ. այլ եթէ տէր կամեսցի զիս անմեղութեամբ դատել, կամք տեսուն լինիցին: Եւ առամայն ետ քահանայապետն ըմկել զլուրն Յովսէփա և ասէ. Գնա փութով երթոյ և դառնալու Եւ Յովսէփ ընթացեալ գնաց. և գա(յ)ի իշանէր ողջանգամ և անփորձ մալով. և իրբեւ տեսին ամսնեքեան թէ ոչ վանացաւ, երկեան յոյժ:

Զնայելով իւր անմեղութեանն, Յովսէփ՝ քաղաքական դատութիւններէ և ծանօթից ծաղրածութիւններէ խոյս տալու համար, որոշեց առնուլ զՄարիամ և ծննդեան ժամանակի համար հեռաւոր աշխարհ մի տանել:

Բ. « Յաղագս ծածուկ գնալոյ նոցա՝ երթալ ի թեթղահեմ»: Պատրաստեց Յովսէփ պաշարը. առաւ կահկարասակին, և ճամբայ ելաւ իր կրտսեր Ռվակ որդւոյն և Մարեմնյ հետ, զոր դրասափ վերայ նստեցուց: Մարիամ ճամբուն վերայ տեսիներ կը տես-

նէր. և մինչ անոնց մասին Յովսեփայ հետ կը խօսակցէր՝ յան-  
կարծ զգալով թէ երկունքը մօտեցած է, ըստ Յովսեփայ.

Ի՞ոյ զիս ի գրաստէ ասաի. զի մանուկն ստիպէ զիս: Յովսէփ ուրախացեալ ասէ.  
Ուր կամիս զի տարայց զքեզ: Ասէ Մարիամ. Փութա ի՞ոյ զիս վաղվաղակի զի նե-  
դէ զիս մանուկս: Ասէ Յովսէփ. Զբնչինիմ արդեաւք, որ պատահեաց ծնունդ սո-  
րա ոչի չենս, այլ տեղի անապատի և անմարդանակ. ուր ոչ գոյ ուրեք աւթեւանք:

Մերձակայ տեղ քարայր մի տեսնուեցաւ, ուր գէջ օդերուն  
կ'ապաւինէին հովիւք իրենց հօտերով: Յովսէփ՝ զ՛յվաէ և զՄա-  
րիամ այրի մէջ թողուց, և ինք վազեց մանկաբարձ մը փնտը-  
ռելու. շուտով հեռուն կին մը տեսաւ, որ յայտնուեցաւ թէ Ե-  
ւա էր. նորա հետ Յովսէփ կը դառնայ առ ծննդականն:

Գ. « Պատմութիւն յաղագս նշանաց և պանչելեաց որ գործե-  
ցաւ ի յայրն », և այլն: Կը ծնանի Քրիստոս ներկայութեամբ հը-  
րաշից, որ վկայեն անարատութեան կուսին: Եւա՝ գեռ նոր Ե-  
րոսադէմէ եկած Սողոմէ կնոյշ կը պատմէ եղած հրաշքը. իսկ  
նա չիհաւասոար Մարեմայ անմեղութեան. և ի պատուհաս ան-  
հաւատութեանն՝ Սողոմէի ձեռքը կը գօսանայ. և երբ պանչե-  
լեաք բժշկութիւն կ'ընդունի, կը պատուիրէ իրեն հրեշտակն որ  
հանդիպածը քաղաքին մէջ չի հրապարակէ, որպէս զի մինչեւ Հե-  
րովի ականջը չհասնի:

Դ. « Յաղագս վասն հրեշտակին կոչելոյ զառ հովիւան զաւետա-  
ւոր բարբառն, և յայրն փութով հասեալ նոցա բազում ընծա-  
յիւք երկրագութիւն տեսաններով »: Այս գլխոյն մէջ մանրամա-  
սըն կը նկարագրուի բաց յայլոց՝ ի կողմանցն արևելից մոգուց  
յերկրագութիւն գալը: Պետք մոգուց էին երեք եղբարք. ար-  
քայ Պարսից Մելքոն, արքայ Արքաբաց Բաղդասար և արքայ  
Հնդկաց Գասպար: Պարսից թագաւորին բերած ընծայից թը-  
ւոյն մէջ էր ձեռնագիր մի պազայ փրկարծութեան նկատ-  
մամբ, տուեալ յԱստուծոյ առ Աղամ, ի միմիթարութիւն փո-  
խան կորուսելոյ գրախտին. որ ձեռքէ ձեռք և ցեղէ ցեղ անց-  
նելով՝ հասաւ վերջապէս մինչեւ առ կիւրոս, և այն ատենէն ըս-  
կըսեալ կը պահուէր Պարսկաստանի մէջ :

Ե. « Յաղագս վասն զի գալստեան տեառն քառամերեա ի տա-  
ճարն »: Այս գլխոյն մէջ կը պատմուի ի մէջ այլոց՝ մանկան ութ-  
օրեայ թլփատութեան և Յիսուս անունը գրուելու մասին:

Զ. Վերնագիր գլխոյս սոմնձուած է ի գրչագրին: Առորա մէջ  
կը պատմուի թէ ի՞նչպէս այր մի անօրէն ի քաղաքէն Երուսա-  
ղեմի՝ Բեգովը անուն, իմացուց Հերովի թէ մոգերը կրցան  
գալ մինչ ի Բեթղեհէմ, երկրպատել Յիսուսի և դառնալ: իսկ

մանկանց կոստորածը՝ այս գլխոյս հեռաւոր առարկայն կը կազմէ :

ի. « Յաղագս վասն դարձեալ նենդութեամբ Զաքարիա զհայրըն Յովաննու » : Հերովդէս մտադիւր փութով կը փնտուէր նմանապէս նաև զմանուկն Յովհաննէս : Սոյն միջոցին Զաքարիայի կինն իւր Յովհաննէս որդւոյն հետ պրծաւ անապատի լերանց վերայ, ուր աղօթիւք մօրն Յովհաննու բացուեցաւ գետինը և ծածկեց զմայրն հանդերձ մանկամբն, ընծայելով նոցա անքոյթ և ապահով ապաւէն մի: Խնդրակըն՝ Զաքարիայէն որդւոյն գրտնուած տեղւոյ մասին լուր մի չառնըլով, Հերովդէս ծածուկ մարդիկ զրկեց, և Զաքարիա սպաննուեցաւ ի տաճարին, և արիւնը ցայտեց մինչեւ ի սեղանն Սրբութեան սրբոց: իսկ մարմինն անցայս եղաւ:

լ. Հետեւեալ՝ ըստ կարգի ութերորդ անվերնագիր գլխոյն մէջ, կը պատմուի Յովիսեփայ՝ թիսուսի ու Մարեմայ հետ յեզիսոսոս փախուստը: Ուզեւորք կը հանդիպին քառասուն աւազակաց խմբի մի դիմաւորին, որոյ քով Յիսուս՝ մի քանի հրաշք կը դործէ: Յիսուսի աջակողմն ի խաչ հանուած աւազակն, այդ գլւխաւորին որդին դեման էր:

Յետ երկար ընթացից, քաղաքներէն միոյն մէջ՝ մանուկն Յիսուս որպէս զի տղաքն զուարձացընէ և զինք ցուցընէ, բարձր տանիքէ մը՝ երգեաց միջով թափանցած արեւո շողոյն հետեւլով՝ թողուց լինքինքն, և մինչեւ վարի սենեակն իջաւ: Յովիսեփ՝ անընդհատ հետամուս ի Հերովդեսէ, հասաւ վերջապէս ի քաղաք մի, որոյ դրանց վրայ հմայութիւնք նկարուած էին: Հոն Յիսուս կ'երթայ ի տես տաճարին Ապողոնի:

Թ. « Յաղագս վասն Յիսուսի խորտակելոյ զկուուն և կործանել զմեհեանս գիւաց: և բազմութիւնք մուրդ կան որ մեւան անդ և յարութիւն որ եղեւ »: Ասս եւս կը պատմուի թէ ի՞նչպէս նոյն քաղքին մէջ մեծասուն մի կը հրաւիրէ զՅովսէփ ընտանեօքն: և էր նա Եղիսաբար հրէայն՝ եկն երուսալեմացի, հայր Ղազարու՝ Մարեմայ և Մարթայի: Ուզեւորք՝ զաննիք իրենց հաւատարիմ բարեկամ կը գտնէն: Յետ մահու Հերովդի, Յիսուսի իսկ կամք և հրեշտակին թելագրութեամբ համարձակեցան դառնալ ի հայրենիս, և նախ առաջին՝ սննոր սահմանակից աշխարհը:

Ժ. « Դարձեալ հրեշտակին երեւել գալ ի յաշխարհն իւր Նազարէթ»: Դէպ ի Նազարէթ ճանապարհին վերայ՝ ուզեւորք տեղի առին ի քաղաք մի ի սահմանս Աբարիս, որ լի էր մեհենօք: Դեւք ի տաճարաց դուրս վազեցին՝ որ բնակիչքը եկաւորաց դէմ հանեն. բայց քաղաքացոցմէ մէկն ալ չի գտան իրենց հա-

մամիտ : Կործանեց մանուկն Յիսուս կուապաշտից բոլոր տաճարներն, և այն ատեն չորս տարուան էր : Կը սիրէր ու կը գըգուէր իր հասակակիցներն, որ իւրեանց կողմանէ յամենայնի կը հնազանդէին իրեն՝ կատարելով նորա ամէն ուղածը . և Յիսուս կը բժշկէր զտղայս ի հիւնդութեանց և ի վիրաց, և յամենայնի կը պաշտպանէր զիրենք : Անդամ մի Թամարայ որդին Արիամ՝ բարձր պատշգամի վերայ քնանալով՝ վար ինկաւ ու մեռաւ. տղաքը վախնալով՝ յանցանքը Յիսուսի վերայ ձգեցին. դատաստանի մէջ՝ Յիսուս ի պաշտպանութիւն անձին՝ դիմաւոր սա կէտին վրայ կը պնդէր՝ թէ յիրաւի իմ ը կերակից տղաքը կը պնդեն միաձայն թէ ես եմ յանցաւորն, բայց չկայ մէկն որ վկայէ թէ նորա ճշմարիտ կը իրուին : Սակայն դատաստան անլող էր. այն ատեն Յիսուս արդարացոյց զանձն՝ վտանգ ելոյն բերնովը՝ յարուցանելով զնա ի մեռելոց :

ԺԱ. « Յաղագս վասն ելանելոյն նորա յԵղիպտոսէ և գալ ի կողմանն հարաւոյ յաշխարհն Արաքիա. տղայութիւն զոր առնէր Յիսուս և մահուան որ եղեւ յարութիւն ի մեռելոց » : Մեկներով յԱրարիայէ ուղեւորքս, հասան « յաշխարհն Ասորուց ի քաղաք Շահապրաւտ » : Այն ատեն Յիսուս էր մանուկ հնդամ. եայ և երից ամոց : Շահապրաւտի մէջ անցուցած կենաց գըլխաւոր գէպքն եղաւ՝ տղոց հետ մէկտեղ Յիսուսի յանապատ գըլնալը : Տղաք մէջերնին հաշիւներ կ'ընէին որսորդութեան մասին. բայց որս մը չերեցաւ, և սկսան ծարաւէ և անօթութենէ տանջուիլ : Այն ատեն Յիսուս գաւազանի հարուածով ժայռէ ջուր բղխսեցոյց. վազած վտակին մէջէն տղաք ձկներ բոնեցին ու ճոխ աւարով դարձան ի տուն : Բայց նոյն ժամանակ քաղքէն աներեւոյթ եղաւ Շարուհեայ որդին փոքրիկն Մովսի . ծնողքը շփոթեցան, հանդիպածը հրապարակեցաւ, և յանցաւոր համարեցան զՅիսուս : Դատաստանի մէջ Յիսուս ինքինքն արդարացոյց՝ նմանապէս հրաշիւք :

Շարայարելի հետեւեալ ամսաթերթով